

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

2019թ. հունվարի 25-ի թիվ 1 նիստի

Ք.Երևան

Նիստին ներկա էին «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 24 անդամներից 24-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցաթերթիկը):

ՀՖԿՍՊԻ գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյանի առաջարկությամբ նիստը վարում էր Խորհրդի տարիքով ավագ անդամ պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, քարտուղարում՝ տարիքով կրտսեր անդամ ՍՄԿ ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Ա.Նովրուզյանը:

Պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, բացելով Խորհրդի անդրանիկ նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՀՖԿՍՊԻ գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյանը առաջարկեց օրակարգում ավելացնել հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի ընտրության հարցը:

Առաջարկությունը ընդունվեց միաձայն. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Խորհրդի անդամ Է.Ավանեսովը առաջարկեց օրակարգում ընդգրկել ռեկտորի ընտրության կանոնակարգում փոփոխություն կատարելու հարցը:

Առաջարկությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 8, դեմ՝ 16, ձեռնպահ՝ 0:

Առաջարկությունը ձայների մեծամասնությամբ չընդունվեց:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի օրակարգը, մեկ հավելումով:

ՕՐԱԿԱՐԳ

1. <<Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ>> հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:

2. <<Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ>> հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:

3. <<Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ>> հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի հաստատում:

4. 2017-2018 ուսումնական տարվա ՀՖԿՍՊԻ հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների ՀՖԿՍՊԻ ղեկավարի հաշվետվության ներկայացումը:

Ձեկուցող՝ ղեկավար, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյան

5. <<Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ>> հիմնադրամի 2018 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի տարեկան կատարողականի հաղորդում

Ձեկուցող՝ ղեկավար, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյան

6. <<Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ>> հիմնադրամի 2019 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի հաստատում:

Ձեկուցող՝ ղեկավար, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյան

7. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի ընտրությունը:

Ձեկուցող՝ ղեկավար, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյան

1. **ԼՍԵՑԻՆ՝** ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության մասին:

Պրոֆեսոր Ս. Վ. Գրիգորյանը առաջարկեց ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության համար ներկայացնել թեկնածուներին:

Պրոֆեսոր Ռ.Դ.Շառոյանի կողմից առաջարկվեց հունահռոմեական ոճի ըմբիշ, Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, Աշխարհի և Եվրոպայի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ, ՀՀ ԱԺ պատգամավոր Արսեն Լևոնի Ջուլֆալակյանի թեկնածությունը:

Նույն թեկնածությունը առաջարկեցին նաև Խորհրդի անդամներ Է.Ավանեսովը և Գ.Մամիկոնյանը:

Պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը Խորհրդի նախագահի ընտրության մասին հարցը դրեց քվեարկության

կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետով և «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3. կետով՝ խորհուրդը **որոշեց**.

1. «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել հունահռոմեական ոճի ըմբիշ, Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, Եվրոպայի և Աշխարհի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ, ՀՀ ԱԺ պատգամավոր Արսեն Լևոնի Ջուլֆալակյանին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Արսեն Ջուլֆալակյանը հավաստիացրեց, որ ջանք ու եռանդ չի խնայի բարելավելու ինստիտուտի ուսումնական և գիտական գործընթացը: Ամբողջ աշխատանքը ուղղված կլինի կրթության որակի բարձրացմանը:

2. ԼՍԵՑԻՆ՝ «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրության մասին:

Խորհրդի նախագահ Ա. Ջուլֆալակյանը առաջարկեց Խորհրդի քարտուղար ընտրել «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյանին:

Այլ թեկնածություն չառաջադրվեց:

Առաջարկությունը դրվեց քվեարկության

կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետով և «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3. կետով՝ խորհուրդը **որոշեց**.

«ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ՀՖԿՍՊԻ գիտական քարտուղար, դոցենտ Մարինե Ասատրյանին:

3. ԼՍԵՑԻՆ՝ Նախագահ Ա. Զուլֆալակյանին: Նա առաջարկեց հաստատել ՀՖԿՍՊԻ աշխատակարգը, շեշտելով, որ խորհրդի աշխատակարգի նախագիծը տրված է բոլոր անդամներին, որոնք կարող են հանդես գալ լրամշակումների առաջարկներով:

Առաջարկություններ չեղան և խորհրդի աշխատակարգը դրվեց քվեարկության.

կողմ՝24, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Ղեկավարվելով «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի կանոնադրության 42.1 կետով և «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի աշխատակարգի 2.4.1 կետով՝ խորհուրդը **որոշեց.**

Հաստատել «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը:

4. ԼՍԵՑԻՆ՝ 2017-2018 ուսումնական տարում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների մասին, ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանի հաշվետվությունը:

Խորհրդի նախագահ Ա. Զուլֆալակյանը հաշվետվության ներկայացման համար առաջարկեց տրամադրել 20 րոպե ժամանակ:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանը ներկայացրեց 2017-2018 ուստարվա ինստիտուտի ձեռքբերումները, բացթողումները, ուսումնական գործընթացը, կատարված գիտահետազոտական աշխատանքները, անդրադարձավ հրատարակչական գործունեությանը, ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքներին:

2017-2018 ուսումնական տարում Հայաստանի ֆիզիկական Կուլտուրայի և Սպորտի Պետական Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների մասին, ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանի հաշվետվությունը կցվում է/:

Զեկուցողին տրվեցին բազմաբնույթ հարցեր:

ՀՀ ԿԳ նախարարի խորհրդատու Գ. Մամիկոնյան.

- ✓ 2016-թվականի հավատարմագրման հետ կապված զեկուցում նշվել էին թերություններ, տեղյակ ենք, որ նման խնդիրներ կան բոլոր ինստիտուտներում, անհրաժեշտ է դրանք արձանագրել և մեթոդներ կիրառել շտկման համար: Ի՞նչ աշխատանքներ են ձեռնարկվել այդ ուղղությամբ: Ցանկալի է ծանոթանալ ուսումնական պլաններում կատարված փոփոխությունների հետ, ի՞նչ խնդիրներ են եղել այդ ժամանակ, հաշվետվությունում չի երևում ուսանողների շարժը:

Հարցին ավելի մասնագիտորեն պատասխանելու համար խոսքը տրվեց Որակի ապահովման բաժնի պետ, դոցենտ Ա.Գյոզալյանին, որը մանրամասնորեն ներկայացրեց հավատարմագրման զեկույցում նշված թերությունները, բովանդակային դրույթները և փոխանցեց համապատասխան փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ գործող զարգացման ռազմավարական ծրագիրը, ՈԱԱԿ-ին ներկայացված թերությունների վերացման հաշվետվությունը՝ կից հավելվածներով:

Խորհրդի անդամ Ա. Բարխուդարյան.

- ✓ Ի՞նչ են իրենցից ներկայացնում <<Շեֆական>> աշխատանքները, խնդրում եմ հարցիս պատասխանի պարոն Առաքելյանը:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը թվարկեց կատարած հասարակական, կամավորական, բարեգործական աշխատանքները, ներկայացնելով նաև ուսխորհրդի առաքելությունը անապահով ընտանիքների աջակցության գործում:

Ավագանու անդամ Է. Ավանեսովին հետաքրքրեց, թե ի՞նչ սկզբունքով է ձևավորվել խորհրդի պրոֆեսորադասախոսական կազմը, ինչու՞ կազմում չեն ընդգրկված դասախոսներ և լաբորանտներ:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյան.

- ✓ Ամբիոնների կողմից ընտրվում են թեկնածուները և ներկայացվում Գիտխորհուրդ հաստատման համար: Գիտխորհրդի որոշումը ուղարկվում է նախարարություն: Լաբորանտները պրոֆեսորադասախոսական կազմի մեջ չեն մտնում: Հիմնականում ընտրվում են փորձառու և բանիմաց մասնագետներ:

Պատասխանը հավելեց պրոֆեսոր Ա. Հարությունյանը, նա նշեց, որ երիտասարդները դեռ աճելու տեղ ունեն, ավելի ճիշտ է ընդգրկվեն տարիների փորձ ունեցող մասնագետներ:

Պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը անդամների ուշադրությունը գրավեց այն հանգամանքին, որ ոչ բոլոր ամբիոնների վարիչները ունեն գիտական աստիճաններ:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը տեղեկացրեց, որ համաձայն գործող կանոնադրության, ամբիոնի վարիչը պարտադիր պետք է ունենա գիտական կոչում, հատկապես թողարկող ամբիոններում, գիտական աստիճանի առկայությունը ոչ թե պարտադիր, այլ ցանկալի է:

Խորհրդի անդամ Ա.Բարխուդարյանը անդրադարձավ ուսանողների հաճախումների հարցին, հետաքրքրվելով, թե ինչպես է ԲՈՒՀ-ը լուծում այդ խնդիրը:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը նշեց, որ այս գործում մեծ դեր են կատարում խմբերի խորհրդատուները, որոնք կազմակերպում են հանդիպումներ, ժողովներ, տանում դաստիարակչական աշխատանքներ, ուսանողներին հրավիրում են ամբիոների և ֆակուլտետների նիստերին, որտեղ քննարկվում են նրանց հաճախումների հարցը: Այդ խնդիրը առկա է բոլոր ԲՈՒՀ –ում և միշտ գտնվում է ռեկտորատի և գիտխորհրդի ուշադրության կենտրոնում:

Խորհրդի նախագահ Ա. Ջուլֆալակյանը անդամների ուշադրությունը գրավեց այն փաստին, որ ԲՈՒՀ-ը իր տեսակով տարբերվում է մյուսներից՝ Աշխարհի, Եվրոպայի չեմպիոն ուսանողներ ունի, որոնց նկատմամբ մոտեցումը յուրահատուկ է, նրանք հիմնականում լինում են հավաքների և բացակայությունները արդարացված են. իհարկե պետք չէ մոռանալ մարզիկների կրթության որակի մասին, նրանց պետք է լուրջ կրթություն մատուցվի:

Ավագանու անդամ Է. Ավանեսովը հավելեց, որ բոլորը հասկանում են ինստիտուտի «սպեցիֆիկան», սակայն անընդունելի է, երբ ղեկավարը միջամտում և ստիպում է դասախոսին գնահատական նշանակել:

- ✓ Ես ուրախ կլինեմ, եթե նման երևույթները վերանան և ինքս հետևողական կլինեմ այդ հարցում, առաջարկում եմ կազմել հանձնաժողովներ, որոնք կկատարեն որոշ աշխատանքներ, գործընթացը բարելավելու նպատակով:

Նախագահ Ա. Ջուլֆալակյանը շեշտեց, որ ժամանակները փոխվել են և անձամբ ինքը հետևողական կլինի այդ արատավոր երևույթների նկատմամբ:

Ավագանու անդամ Է. Ավանեսով.

- ✓ Տեղյակ եմ, որ մեկ-երկու ամսվա ընթացքում 2-3 դեկան է փոխվել, ինչն՝ կարող եք սա բացատրել:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը նշեց, որ դեկանների ընտրությունը տեղի է ունեցել հիմնադրամի վերակազմավորվելուց հետո, գիտխորհրդի նիստում, սակայն մեկ տարի հետո ընտրված դեկանը իր դիմումի համաձայն հրաժարվեց աշխատելուց, նշանակվեց ժամանակավոր պաշտոնակատար, որը մի քանի ամիս հետո մեկնեց Գերմանիա՝ մշտական բնակության և նրանից հետո այդ պաշտոնում նշանակվեց դոցենտ Է.Գալտազազյանը, որը հանդիսանում է ժամանակավոր պաշտոնակատար:

Ոչ ոք ինստիտուտից չի՝ հեռացվել, չի՝ կրճատվել, ոչ ոք քաղաքական հայացքների համար չի տուժել և նման բան լինել չի կարող:

Ավագանու անդամ Է. Ավանեսով.

- ✓ Դուք հայտարարություն մի արեք քաղաքական հայացքների վերաբերյալ: Ես կարող եմ իմ օրինակով մանրամասնել Ձեր վերաբերմունքը, հիշեցնել ինձ հետ կապված դեպքը, լրագրողների ներկայությամբ այստեղ հայտարարություն է արվում : Ես ունեմ փաստեր, երբ իմ հայտնի ելույթից հետո ինձ իր մոտ հրավիրեց դեկանը, զգուշացրեց, սկսվեցին ամենօրյա ստուգումներ, կազմակերպվեցին բաց դասեր, դրանից հետո, կապված Սասնա Շոերի հետ, իմ նկարները դրվել էին ռեկտորի սեղանին: Վերոհիշյալը համընկավ հիմնադրամի հետ, երբ բոլոր աշխատակիցների հետ պայմանագիր էր կնքվում , ինձ հետ այլևս պայմանագիր չկնքվեց:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյանը նշեց, որ միշտ բարյացկամ է վերաբերվել Է. Ավանեսովին, օգնել է իրեն տարբեր հարցերում: Է.Ավանեսովը ազատվել է աշխատանքից համաձայն իր դիմումի:

Է. Ավանեսովը ժխտեց իրեն օգնելու փաստը և նշեց, որ այդ իրադարձություններից հետո ռեկտորը իրեն նույնիսկ չի ընդունել:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյանը հավելեց, որ Է. Ավանեսովի ասածները չեն համապատասխանում իրականությանը: Ասաց որ Է.Ավանեսովի ղեկավարությամբ նամակ է ուղղարկվել նախարարություն, որտեղ անհիմն փաստեր են բերվել ինստիտուտի գործունեության վերաբերյալ: Ստեղծվել է հանձնաժողով, ստուգում է կատարվել գրված բոլոր կետերով և ոչ մի խախտում չի հայտնաբերվել:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյան .

- ✓ Ինստիտուտի դռները միշտ բաց են բոլորի առջև, բոլորը կարող են մտնել իրենց հարցադրումներով և առաջարկություններով, մենք պատրաստ ենք բոլորին ընդունել և լսել, սակայն գրել անհիմն մեղադրանքներով լի նամակներ և ամեն կերպ փորձել նվազեցնել ինստիտուտի վարկանիշը ոչ միայն տգեղ երևույթ է, այլ նաև անընդունելի: Այն չի բխում ինստիտուտի շահերից:

Ավագանու անդամ Է.Ավանեսովի կողմից տրվեցին օրակարգից դուրս և անձնավորված հարցեր, ինչը խաթարեց Խորհրդի բնականոն ընթացքին:

Պրոֆեսոր Ռ. Շառոյանը առաջարկեց շարունակել նիստը համաձայն օրակարգի հարցերի: Չշեղվելով այլ բնույթի հարցադրումներով, առավել ևս անձնական խնդիրների լուծման միտումով:

Խորհրդի նախագահ Ա. Զուլֆալականը առաջարկեց նմանատիպ հարցերի համար հրավիրել առանձին ժողով, որտեղ մանրամասն կքննարկվեն ներկայացված խնդիրները:

Խորհրդի նախագահ Ա. Զուլֆալականը առաջարկեց Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 2017-2018 ուսումնական տարվա կատարած աշխատանքները համարել բավարար, և հարցը դրվեց քվեարկության:

Կողմ՝ 17, դեմ՝ 6, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «ՀՀԿՍՊԻ» հիմնադրամի կանոնադրության 42.3 կետով և «ՀՀԿՍՊԻ» հիմնադրամի աշխատակարգի 2.4.3 կետով՝ Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի Պետական ինստիտուտ» հիմնադրամի 2017-2018 ուսումնական, տարվա կատարած աշխատանքների վերաբերյալ ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանի հաշվետվությանը:
2. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի Պետական ինստիտուտ» հիմնադրամի 2017-2018 ուսումնական տարվա կատարած աշխատանքները համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀԿՍՊԻ ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանի հաղորդումը 2018թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի տարեկան կատարողականի մասին:

2018թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի տարեկան կատարողականը կցվում է/ Հարցերին ավելի հանգամանորեն պատասխանելու համար, նախագահի առաջարկությամբ, հրավիրվեց ինստիտուտի հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա.Գրիգորյանը:

Նախարարի խորհրդական Գ.Մամիկոնյանը պահանջեց կատարողականը ներկայացնել ավելի բաց վիճակով:

Ա.Գրիգորյանը տոկոսային հարաբերությամբ ներկայացրեց եկամտային և ծախսային հոդվածները:

Խորհրդի նախագահ Ա. Զուլֆալականի առաջարկությամբ տեղեկատվությունը ընդունվեց ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀԿՍՊԻ ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանին: Նա ներկայացրեց ինստիտուտի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը:

ՀՀԿՍՊԻ ինստիտուտի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը կցվում է/:

Խորհրդի անդամ Գ.Մամիկոնյանը նշեց, որ զարգացման ֆոնդը նվազագույնն է և նշված գումարով բարելավել աշխատանքները հնարավոր չէ: Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերը կազմում են 5 միլիոն դրամ, որը բավական մեծ թիվ է:

Հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա.Գրիգորյանը բացատրեց, որ խոսքը գնում է ծառայողական մեքենայի ծախսերի մասին և ներառում է մեքենայի փոխարինող մասերի, քայուղերի, վառելիքի ծախսերը: Ա.Գրիգորյանը հավելեց, որ զարգացման ֆոնդը, որը իրենից ներկայացնում է պահուստային ֆոնդ, հնարավոր է ավելացնել միայն եկամտային մասը ավելացնելու դեպքում:

Խորհրդի անդամ Է.Ավանեսովին հարցին, թե արդյո՞ք մեքենան միայն ծառայողական նպատակներով է օգտագործվում. տրվեց դրական պատասխան:

Ավագանու անդամ Է. Ավանեսովը ելույթում նշեց, որ ինստիտուտի մարմնամարզության դահլիճը վերանորոգման կարիք ունի, գտնվում է անմխիթար վիճակում, սակայն այս տարի վերանորոգման համար գումար չի նախատեսվել:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը բացատրեց, որ այս 2019թվականին մեծ գումարներ է նախատեսվել գործուղումների և ուսանողների արտերկրներում ուսումնառություն կազմակերպելու համար: Ռեկտորը պարզաբանեց, որ աշխատանքի ընթացքում կղիմենք բարերարների՝ ընթացիկ վերանորոգման աշխատանքները կատարելու համար:

Հարց հնչեց խորհրդի անդամ Ա.Հակոբյանի կողմից ուսանողական խորհրդին տրվող տարեկան գումարի և դասախոսների աշխատավարձերի հետ կապված.

- ✓ Արդյո՞ք ուսանողական խորհրդին տրամադրվող գումարը ֆիքսված է և աշխատավարձերի բարձրացումը որևէ նախատեսված չափ ունի:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանը ասաց, որ տրամադրվող գումարը ամրագրված է և այն ուսանողական խորհրդին բավարարում է: Աշխատավարձերը ևս ամրագրված են:

ՀՀ ԿԳ նախարարի խորհրդական Գ. Մամիկոնյան.

- ✓ Արհեստակցական կազմակերպությունը ի՞նչ է անում և ի՞նչ է իրենից ներկայացնում: Աշխատավարձից պահվում է 1%: Արդյոք աշխատողը գիտի ուր է գնում այդ գումարը:

Հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա.Գրիգորյանը պատասխանելով հարցին նշեց, որ արհեստակցական կազմակերպությունը հասարակական կազմակերպություն է, որին փոխանցվում է ինստիտուտի աշխատակիցների

աշխատավարձերից գանձված 1% անդամավճարը: Ինստիտուտի բոլոր աշխատակիցները արհեստակցական կազմակերպության անդամ են և տեղյակ են գործունեությունից, քանի որ փոխանցված գումարները օգտագործվում էիր հենց իրենց այս կամ այն կարիքների համար: Բացի դրանից, արհեստակցական կազմակերպության նախագահը ներկայացնում է ռեկտորատում իր տարեկան հաշվետվությունը:

« ԿԳ նախարարի խորհրդական Գ.Մամիկոնյան.

- ✓ Իմ ցանկությունն է, որ աշխատանքը լինի թափանցիկ, պահպանի աշխատողների շահերը: Խնդրում եմ հաջորդ տարի վերանայել այս կետը:

Խորհրդի նախագահ Ա.Զուլֆալակյանը ՀՖԿՍՊԻ 2019թ-ի տարեկան նախահաշվի հաստատման հարցը դրեց քվեարկության:

Կողմ-17, դեմ-6, ձեռնպահ- 0:

Ղեկավարվելով «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի կանոնադրության 42.7 կետով և «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի աշխատակարգի 2.4.7 կետով՝ խորհուրդը **որոշեց**.

Հաստատել «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի 2019թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը:

Խորհրդի անդամները անդրադարձան ինստիտուտի ուսումնական գործընթացի հուզող հարցերին: Նշվեց ԲՈՒՀ-ի առանձնահատկությունը, նրա առջև ծառայած հարցերը: Բոլոր անդամները հույս հայտնեցին, որ միայն միահամուռ ուժերով կկարողանան խնդիրներին լուծում տալ:

Տեղի ունեցան բանավեճեր անդամների միջև, որոնք դուրս էին օրակարգի հարցերից և քննարկվող խնդիրներից:

Խորհրդի անդամ Ա. Բարխուդարյանը կրկին անդրադարձավ հաճախումների հարցին, հետաքրքրվելով թե ինչպես են չհաճախող ուսանողները ստանում բարձր գնահատականներ: Խնդիրները պետք է բարձրաձայնվեն, որպեսզի այստեղ լուծում ստանան:

ՈԱԲ պետ Ա Գյոզալյան.

- ✓ Բոլոնյան համակարգը թույլ է տալիս չհաճախել դասերին. ուսանողը կարող է չներկայանալ և հանձնել բոլոր առաջադրանքները, պարզապես բարձր չի գնահատվի:

Խորհրդի անդամ Գ.Մամիկոնյանը հավելեց, որ արատավոր երևույթներ կան բոլոր ԲՈՒՀ-երում, խնդիրը պետք է հաղթահարել: Հոգաբարձուների անդամների առաքելությունն

է օժանդակել ինստիտուտին, կառուցել նոր հարաբերություններ, բարձրացնել ուսման որակը:

Խորհրդի նախագահ Ա. Զուլֆալայանը առաջարկեց չխոսել միայն թերությունների մասին.

- ✓ Սա յուրահատուկ ինստիտուտ է , չենք կարող չեմպիոնին դուրս թողնենք, նրանց պետք է հատուկ մոտեցում լինի, սակայն լավագույնները քիչ են, ավելի ցածր մակարդակի մարզիկները կարող են հավաքներից դուրս հաճախել դասերին ստանան որակյալ ուսում, որքան էլ աչք փակվի բացակայությունների վրա, ուսման որակը չպետք է տուժի, կան չգրված օրենքներ, որոնք կիրառվում են միայն Աշխարհի և Եվրոպայի չեմպիոնների համար: Ես ցանկություն ունեմ կազմակերպելու հատուկ դասընթացներ լավագույն մարզիկների համար:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ. Բ. Առաքելյան.

- ✓ Լավագույն մարզիկները միշտ եղել են մեր ուշադրության կենտրոնում, նրանց համար ստեղծվել են բոլոր պայմանները սովորելու համար: Մեր գերագույն նպատակն է ապահովել մեր երկիրը որակյալ մասնագետներ: Ուսանող մարզիկներին և մրցանակակիրներին հրավիրում ենք գիտխորհրդի նիստերին, հաճախ դրամական պարգևատրումներ տալիս նրանց:

Ավագանու անդամ Է. Ավանեսով.

- ✓ Մենք եկել ենք լավ ու բարի նպատակներով, բայց լսեցինք ստորագրահավաքի մասին, ինչը տարակուսելի փաստ էր: Կապված հաճախումների հետ՝ թույլ օղակը դասախոսն է, ով աշխատում է ուսանողի հետ: Ես տեղյակ եմ, որ ստիպողական են դրվում գնահատականներ, օրինակ ինչո՞ւ պետք է դեկանը միջամտի այդ հարցում: Ուրախ եմ, որ միտում կա նմանօրինակ արատավոր երևույթները վերացնել, առաջարկում եմ ստեղծել հանձնաժողովներ, որոնք կզբաղվեն նման հարցերով, և ես ինքս կլինեմ հետևողական :

Խորհրդի անդամ Ա. Բարխուդարյանը հարց ուղղեց պրոֆեսոր Ա. Հարությունյանին, ստորագրահավաք կազմակերպելու հարցի վերաբերյալ, նշելով, որ դա կատարվել է հաշվի չառնելով աշխատողների կամքը:

Պրոֆեսոր Ա. Հարությունյանը փաստեց, որ ոչ մի ստիպողական գործողություն չի կատարվել, որ այժմյա անդամների կողմից գրված բողոքը եղել է անհիմն զրպարտանք, վիրավորանք հասցրած ամբողջ կոլեկտիվին, իսկ ստորագրահավաքը եղել է դրա

պատասխանը: Եվ երբ ռեկտորը տեղեկացել է դրա մասին, անհապաղ արգելել է դադարեցնել ստորագրահավաքը:

Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյան.

- ✓ Երբ ինձ հայտնեցին ստորագրահավաքի մասին, ես կտրուկ կանխեցի ընթացքը և տեղեկացրեցի դրա մասին համապատասխան մարմիններին:

Խորհրդի նախագահ Ա. Ջուլֆալակյանը.

- ✓ Ժամանակները փոխվել են մենք հավաքվել ենք, որ նման արտասովոր երևույթները վերանան, բոլոր կառույցներում այժմ ուրիշ օրենքներ այլևս չեն գործելու: Մենք պետք է աշխատենք միայն բաց, թափանցիկ՝ ուսման որակը բարձրացնելու համար: Խնդրում եմ եզրափակել ելույթները, խոսքը տրամադրենք նաև ուսանողներին:

Ուսխորհրդի անդամ Մ. Պողիկյան.

- ✓ Շատ ծանր մթնոլորտ է, բոլորը լարված են, կարևոր հարցեր են քննարկվում : Մենք համախմբվելու ենք որ խնդիրներին լուծում տանք : Նկատեցի, որ խոսում ենք միայն բացասականի մասին, բայց կա նաև դրականը: Անգլերենի դասերին չհաճախելով ես ստացա ցածր գնահատական, /սակայն իմ մակարդակը բարձր է/ իսկ հաճախող ուսանողը ստացել էր ավելի բարձր գնահատական: Ուզում եմ նշել որ դասախոսները օբյեկտիվ են, աշխատում են ուսանողի շահերից ելնելով:

Ուսանողի ելույթից հետո կրկին բարձր ծայնով միջամտություններ և ռեպլիկներ եղան:

Ռ.Դ.Շառոյանը հորդորեց խորհրդի անդամներին լինել զգոն, չվիրավորել միմյանց:

Անձնական հարցերը չհանրայնացնել . << Անանձնական մոտեցումներով միայն կարել է լուծել բոլոր խնդիրները>>:

Խորհրդի նախագահ Ա. Ջուլֆալակյան.

- ✓ Ինստիտուտի բոլոր կառույցները պետք է աշխատեն նոր օրենքներով, նոր մոտեցումներով, առաջացած բոլոր խնդիրները պետք է բարձրացվեն հրապարակայնորեն, որպեսզի ճիշտ լուծում ստանան: Մեր խորհուրդը իր ամբողջ գործունեությունը կուղղի արատավոր երևույթները վերացնելու, ուսումնական գործընթացը բարելավելու, գիտական ներուժը բարձրացնելու և այլ հարցերի իրականացմանը:

7. ԼՍԵՑԻՆ՝ Ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ. Առաքելյանին: Նա տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ հիմնադրամների մասին ՀՀ օրենքի պահանջով պետք է մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ը հիմնադրամը հրապարակի հաշվետվություն 2018թ. գործունեության մասին: Պետք է հիմնադրամը ունենա նաև 2018թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող կազմակերպության եզրակացությունը, եթե հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը:

Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի ընտրությունը իրականացնում է Հոգաբարձուների խորհուրդը: Այն Հոգաբարձուների խորհրդի բացառիկ իրավասությունն է:

Ինստիտուտը այդ նպատակով դիմել է և ստացել է աուդիտորական ծառայության իրականացման վերաբերյալ գնային առաջարկներ՝ միջազգային ճանաչում, հեղինակություն և համապատասխան փորձ ունեցող տարբեր աուդիտորական կազմակերպություններից:

Ներկայացվեցին այդ գնային առաջարկները՝ աուդիտը իրականացնող կազմակերպության ընտրության նպատակով:

Նախագահ Ա.Զուլֆալակյանը աուդիտ իրականացող անձի ընտրության հարցը դրեց քվեարկության :

Կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ղեկավարվելով «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի կանոնադրության 42.9 կետով և «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի աշխատակարգի 2.4.9 կետով՝ խորհուրդը **որոշեց**.

«ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձ ընտրել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ:

Հոգաբարձուների խորհրդի
նախագահ՝

Ա. Լ. Զուլֆալակյան

Հոգաբարձուների խորհրդի
քարտուղար՝

Մ.Ռ. Ասատրյան